

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016թ. ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետն իր գործունեությունն իրականացնում է համալսարանի և ֆակուլտետի կանոնադրությունների և ռազմավարությունների հիման վրա՝ հենվելով ՀՀ կրթության մասին օրենքի, ՀՀ կրթության և գիտության նախարարությունից ստացած հրահանգների ու որոշումների, ինչպես նաև համալսարանի կառավարման խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի, ուսումնական վարչության և գիտական մասի որոշումների հիման վրա:

Հիմք ընդունելով Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի զարգացման հայեցակարգը (2014-2018թթ.) և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ռազմավարությունը (2015-2018թթ.)՝ ստորև ներկայացնում ենք ֆակուլտետում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունն ըստ բաժինների:

1. 2016թ. պլանավորած աշխատանքներ.

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՆՊԱՏԱԿ 1.ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ		
Նպատակ		Քայլեր
1.1.	Մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայում և բարելավում	ՀՀ ՈԱՇ-ի պահանջներին և ՎՊՀ-ի առաքելությանը, տեսլականին և ռազմավարությանը համապատասխան, աշխատաշուկայում մրցունակ, մշակված և ներդրված ՄԿԾ-ներ
1.2.	"Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա" և "Ռադիոֆիզիկա" նոր մասնագիտությունների կրթական ծրագրի մշակում	Շահառուներին, հասարակությանը նոր կրթական ծրագրերի մատուցում

2. 2016 թ. կատարված աշխատանքներն ըստ սահմանված նպատակների և խնդիրների.

Ֆակուլտետը 2015-2016թթ. ժամանակաշրջանում բակալավրիատի կրթության ծրագրեր է իրականացրել հետևյալ մասնագիտությունների գծով.

010100- "Մաթեմատիկա" - առկա և հեռակա համակարգեր,

050200-"Ինֆորմատիկա" - առկա և հեռակա համակարգեր,

010400-"Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա" - առկա համակարգ,

050600-"Տեխնոլոգիա և ձեռնարկչություն" - առկա և հեռակա համակարգեր,

010500-"Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա" - առկա համակարգ,

010600-"Ֆիզիկա" - առկա և հեռակա համակարգեր:

Մագիստրատուրայի կրթական ծրագիր իրականացվել է հետևյալ մասնագիտության գծով.

050200-"Ինֆորմատիկա" - առկա համակարգ:

2016-2017թթ. ժամանակաշրջանում բակալավրիատի կրթության ծրագրեր են իրականացվել հետևյալ մասնագիտությունների գծով.

056201.01.6- "Մաթեմատիկա" - առկա և հեռակա համակարգեր,

050200-"Ինֆորմատիկա" - առկա և հեռակա համակարգեր,

06101.02.6-"Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա" - առկա և հեռակա համակարգեր,

050600-"Տեխնոլոգիա և ձեռնարկչություն" - հեռակա համակարգ,

010500-"Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա" - առկա համակարգ,

056802.01.6-"Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա"- առկա համակարգ,

010600-"Ֆիզիկա" - առկա և հեռակա համակարգեր,

իսկ մագիստրատուրայի կրթական ծրագրեր իրականացվել են հետևյալ մասնագիտությունների գծով.

056201.01.7-"Մաթեմատիկա" – առկա համակարգ,

061101.01.7-"Ինֆորմատիկա" - առկա համակարգ,

011401.04.7-"Ֆիզիկա" - առկա համակարգ:

Կրթական ծրագրերի համալսարանականացման գործընթացի ընթացքում կատարվել է նոր կրթական ծրագրերի ստեղծման փորձ, ինչպես նաև ներդրված կրթական ծրագրերի վերանայում և բարելավում: 2014-2016 թթ. ֆակուլտետային ուսումնամեթոդական խորհրդի նիստերում քննարկվել են նոր ՄԿԾ-ները, իսկ արդեն ներդրվածների ինքնավերլուծությունները:

Բոլոր ուսումնական պլանների մեջ փոխված են դասախոսություն/գործնական, սեմինար, դասախոսություն/լաբորատոր հարաբերակցությունները՝ հոգուտ գործնական մասի: Փոփոխության է ենթարկվել նաև կամրնտրական դասընթացների

ծավալը. բակալավրիատում այն կազմում է ուսումնական գործընթացի 17-20%, իսկ մագիստրատուրայում՝ ավելի քան 25%: Կամընտրական դասընթացների ընտրությունը կատարվում է ուսանողների կողմից, ընդ որում մագիստրատուրայում այդ ընտրությունը կատարվում է ոչ միայն առարկաների մեջ, այլ նաև դասախոսների:


2016 թ. ներդրված համալսարանական մագիստրոսական ծրագրերում հետազոտական բաղադրիչը կազմում է 40%:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում ուսանել են մոտ 350 ուսանողներ:

Ֆակուլտետի ուսումնամեթոդական աշխատանքները սպասարկում են ֆիզիկայի 4, ինֆորմատիկայի 2, "Տեխնոլոգիա և ձեռնարկչություն" մասնագիտության 2 լաբորատորիաներ, ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանի անվան համակարգչային կենտրոնը, արհեստանոցը, էլեկտրոնային լսարանը և գիտահետազոտական կոմպլեքս լաբորատորիան:

Բակալավրիատի առկա ուսուցման համակարգի առաջադիմությունը 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակում կազմել է 93%, 2-րդ կիսամյակում՝ 97.5%, իսկ հեռակա համակարգում այդ ցուցանիշը եղել է համապատասխանաբար 96% և 91.6%: Մագիստրատուրայի առաջադիմությունը կազմել է 100%:

Նախորդ ուսումնական տարիների համեմատությամբ ունենք հետևյալ ցուցանիշները(նկար1).



Նկար 1. Քննաշրջանների արդյունքները ըստ ուսումնական տարիների

Ինչպես երևում է աղյուսակից հեռակա բաժնում առաջադիմության դինամիկան դրական է, իսկ առկա բաժնում պահպանվում է 90-ից բարձր տոկոսը:

2015-2016 ուսումնական տարում մագիստրատուրայի ծրագրով առկա համակարգում ուսումն ավարտեցին 7 ուսանողներ ("Ինֆորմատիկա" մասնագիտություն), որոնցից 4-ը բուհն ավարտեցին գերազանց առաջադիմությամբ: Նրանց մագիստրոսական թեզերի թեմաները համապատասխանում էին ԻՏՄՄ ամբիոնի գիտական ուղղվածությանը: Նշենք, որ այդ 7 շրջանավարտներից 5-ը աշխատանք ունեն, որոնցից երկուսն աշխատում են ՎՊՀ-ում:

Բակալավրիատի կրթական ծրագրով ուսուցումն ավարտել են 98 ուսանողներ (61 առկա և 37 հեռակա), գերազանց առաջադիմությամբ՝ 12 ուսանող:

2016-2017 ուստարում ֆակուլտետի հայտարարված երեք "Մաթեմատիկա", "Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա", "Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա" մասնագիտությունների գծով 1-ին կուրսեր են ընդունվել բակալավրի կրթական ծրագրում առկա բաժին 55 ուսանող, հեռակա բաժին՝ 15 ուսանող, իսկ մագիստրոսական կրթական ծրագրում՝ 20 ուսանող:

2015-2016 ուստարում ակադեմիական ցածր առաջադիմության պատճառով հեռացվել է հեռակա բաժնից 8 ուսանող: Ուսումնական պարապմունքներից բացակայության պատճառով հեռացվել են հեռակա բաժնից մեկ ուսանող: Իր դիմումի համաձայն առկա բաժնից հեռացվել է 4 ուսանող, հեռակա բաժնից՝ 2 ուսանող: Հեռակա բաժնից տարեկետման է մեկնել 2 ուսանող: Առկա բաժնի ՄՍ համակարգից զինձառայության է մեկնել 13 ուսանող և հեռակա բաժնից 10 ուսանող: Վերականգնվել են հեռակա բաժնում զինձառայությունից վերադարձած 5 ուսանող, առկա բաժնում՝ 7 ուսանող, մեկ ուսանող ընդունվել է 2-րդ մասնագիտություն ստանալու համար:


Բավարար մակարդակով են կազմակերպվել արտադրական պրակտիկաները: Բակալավրիատի ուսանողների մանկավարժական պրակտիկայի համար ընտրվել են՝ "Մաթեմատիկա" բաժին՝ թիվ 15 դպրոցը, "Ինֆորմատիկա" բաժին՝ թիվ 1 դպրոցը, "Էվրիկա" հատուկ դպրոցը, ՎՊՀ հենակետային վարժարանը, իսկ "Տեխնոլոգիա և ձեռնարկչություն" բաժին՝ թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանը: Արտադրական պրակտիկայից առաջ կազմակերպվել են խորհրդակցություններ համապատասխան կուրսերի ուսանողների, մեթոդիստների, մանկավարժների և

հոգեբանների մասնակցությամբ: Ինչպես և նախորդ տարիներին, մագիստրատուրայի բաժնի ուսանողների արտադրական պրակտիկան այս ուստարում ևս կազմակերպվեց բուհում: Փորձը ցույց է տալիս, որ մեր ֆակուլտետի մագիստրատուրայի մի շարք ուսանողներ 2-րդ կուրսում արդեն ի վիճակի են բակալավրիատում դասավանդելու:

2.ԳԻՏԱՆԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՆՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ 2. ԳԻՏԱՆԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՆՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	
Նպատակ	Քայլեր
2.1. Ամբիոնների համալրում երիտասարդ կադրերով:	Ամբիոնները համալրում որակյալ, փորձառու մասնագետներով և երիտասարդ խոստումնալից կադրերով:
2.2. Երիտասարդ կադրերի ներհոսք գիտության ոլորտ:	ՈՒԳԸ աշխատանքներ կատարելու հնարավորություններ և աջակցություն առաջավոր ուսանողների համար:
2.3. Ամբիոնների դասախոսների գիտահետազոտական գործունեության աջակցման, իրախուսման քաղաքականություն և արդյունավետության ապահովում:	Կանոնակարգի մշակում:


Ֆակուլտետում գործում են 3 մասնագիտական ամբիոններ, որտեղ աշխատում են հիմնական հաստիքներով և ժամավճարային կարգով 41 դասախոսներ, այդ թվում գիտության դոկտոր 3, որոնցից մեկը՝ պրոֆեսոր, 23 թեկնածուներ, որոնցից 22-ը՝ դոցենտներ և համահամալսարանական ամբիոնների դասախոսներ (նկար 2):



Նկար 2.

Համեմատած անցած տարվա ցուցանիշների հետ թեկնածուների թիվը նվազել է:

Պրոֆեսորադասախոսական համակազմի մինչև 30 տարեկան դասախոսների թիվը 2 է, 30-40 տարեկան՝ 4, 40-50 տարեկան՝ 8, 50-60 տարեկան՝ 9, 60-70 տարեկան՝ 13, 70 տարեկանից բարձր՝ 5 (նկար 3):



Նկար 3. Պրոֆեսորադասախոսական համակազմի բաշխումը ըստ տարիքի

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի դասախոսների կողմից հրատարակվել են 20 աշխատանքներ ("Մաթեմատիկայի" ամբիոն-7 աշխատանք, "Ինֆորմատիկայի և տնտեսագիտամաթեմատիկական մեթոդների ու մոդելավորման" ամբիոն – 4 աշխատանք, "Ֆիզիկայի" ամբիոն – 9 աշխատանք):

2016 թ. սեպտեմբերից ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետից 2 հայցորդ են ձևակերպվել, իսկ "Մաթեմատիկայի" ամբիոնի մեկ դասախոս ընդունվել է Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանի ասպիրանտուրայի (հետազոտողի կրթական ծրագիր) անվճար համակարգ "Երկրաչափություն և տոպոլոգիա " մասնագիտությամբ:

Ուսանողների գիտահետազոտական աշխատանքները նրանց կրթության կարևոր բաղադրիչներից են: Ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության աշխատանքները համակարգվում են ֆակուլտետային ՈԻԳԸ-ի կողմից: Այս ուստարում ֆակուլտետում ՈԻԳԸ կոնֆերանսին զեկուցած 10 աշխատանքներից 6 լավագույնները երաշխավորվել են և զեկուցվել համալսարանի ՈԻԳԸ տարեկան գիտաժողովում: 2016թ. հոկտեմբերին ֆակուլտետի "Ինֆորմատիկա" մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհին ՈԻԳԸ շրջանակում մասնակցել և զեկուցումով հանդես է եկել Արցախի պետական համալսարանում տեղի ունեցած

ՈՒԳԸ միջազգային գիտաժողովում նվիրված Արցախի անկախության 25-ամյակին: Նա ճանաչվել է մասնախմբի լավագույն ներկայացնող: Զեկուցված աշխատանքը երաշխավորվել է հրատարակման:



Ամբիոնների առջև շարունակաբար խնդիր է դրված ստեղծելու ՈՒԳԸ աշխատանքներ կատարելու հնարավորություններ բոլոր այն ուսանողների համար, ովքեր ցանկություն ունեն և ընդունակ են զբաղվելու հետազոտական աշխատանքով:

3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ		
Նպատակ	Քայլեր	
3.1. 1. Մատուցվող կրթական ծառայության կատարելագործում	1. Դասախոսական կազմի կոմպլեքտենտության բարձրացում: 2. Արտաքին շահառուների ընդգրկում ավարտական պետական քննությունների հանձնաժողովներում:	

Ֆակուլտետը ներգրավված է բուհի կողմից իրականացվող կրթական համակարգի բարեփոխումների և համալսարանական կրթական ծրագրերի կազմման գործընթացում:

- Կրեդիտային համակարգի պահանջներին և չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլաններ են կազմվել բակալավրի "Մաթեմատիկա", "Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա" , "Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա" և "Ռադիոֆիզիկա" մասնագիտությունների համար:

- Ամբիոնների կողմից վերամշակվել են թողարկվող մասնագիտության առարկաների ուսումնամեթոդական փաթեթները, ուսումնական պլանին համապատասխան փոփոխվել են առարկայական ուսումնական ծրագրերը, վերամշակվել դասախոսական տեքստերը:
- Նոր ուսումնական պլաններին համապատասխան վերամշակվել են մասնագիտությունների տեղեկագրքերը:
- Թողարկող ամբիոնների կողմից կազմվել են մասնագիտությունների կրթական ծրագրերը: Ներկայումս ամբիոնները զբաղված են թերությունների վերացման և հիմքերի ապահովման գործընթացներով:
- Որակի ապահովման կենտրոնի, ինչպես նաև ֆակուլտետի կրթական ծրագրերի մշակման խմբերի կողմից հարցումներ են անցկացվել ուսանողների շրջանում ուսումնական ծրագրերի, դասավանդման մեթոդների, նրանց որակի ապահովման , գնահատման չափանիշների մեխանիզմների բարելավման ուղիների, կրթական բարեփոխումների ընթացքի վերաբերյալ:
- Կատարվել է դասախոսական կազմի վերապատրաստում օտար լեզվից, ինֆորմատիկայից, իրավագիտությունից և մանկավարժությունից:
- Առաջին կուրսի ուսանողներին տեղեկատվություն է տրամադրվել կրթական համակարգի և ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման վերաբերյալ:
- Ֆակուլտետի ամբիոնների վարիչները, լաբորանտները և դասախոսները մասնակցել են ՈԱԿ-ի սեմինարներին, խորհրդատվություններին, ինչպես նաև կրթական ծրագրերի ինքնավերլուծության աշխատանքներին:

4. ՍՈՑԻԱԼ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ 4. ՍՈՑԻԱԼ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
4.1.	1. Ակադեմիական խորհրդատուների համակարգի կատարելագործում:	1. Ակադեմիական խորհրդատուների աշխատանքային ծրագրերի և պլանների մշակում:
4.2.	2. Ուսանողների համակողմանի զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծում:	2. Բարոյական, գեղագիտական, հայրենասիրական զգացմունքների ձևավորմանն ուղղված տարատեսակ միջոցառումների կազմակերպում և անցկացում:

Ակադեմիական խորհրդատուների խնդիրն է եղել պարզաբանել ուսանողի իրավունքները և պարտականությունները, կազմակերպել կրթական գործընթացին վերաբերող հարցերի անհատական և խմբային խորհրդատվություն, մասնակցել ուսանողի ակադեմիական կարգավիճակի բարելավմանը, հսկել և վերլուծել ուսանողի առաջադիմության դինամիկան, կազմել ուսանողների անձնական տվյալների բազա: Յուրաքանչյուր շաբաթվա վերջում խորհրդատուները ամփոփել են մատյանի տվյալները և ներկայացրել Ավագ խորհրդատուին կամ դեկանին: Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում ակադեմիական խորհրդատուների ընտրությունը կատարվում է հետևյալ սկզբունքով. առաջին կուրսի ընտրված ակադեմիական խորհրդատուն մինչև ավարտական կուրս մնում է անփոփոխ: Արդյունքում նա ավելի հանգամանորեն է մոտենում յուրաքանչյուր ուսանողի առաջադիմության և սոցիալ-դաստիարակչական հարցերին:

Կարևորում է նաև լավագույն ուսանողների խրախուսման հարցը: Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի լավագույն ուսանողները ստացել են համալսարանի սահմանած անվանական կրթաթոշակները, ինչպես նաև ֆակուլտետի դեկան Ժ. Հախինյանի անվան կրթաթոշակը:

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ուսանողները կազմակերպել և ակտիվ մասնակցություն են ունեցել ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումներին, որոնք ուղղված են գեղագիտական, հայրենասիրական հայացքների ձևավորմանը:

- Փետրվարի 1-ին ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ուսանողական խորհուրդը կազմակերպել է միջոցառում՝ նվիրված հայոց բանակի կազմավորման 24-ամյակին:



- Մարտի 2-ին տեղի ունեցավ հայ մեծ կոմպոզիտոր Առնո Բարաջանյանի ծննդյան 95-ամյակին նվիրված միջոցառումը:



- Մարտի 14-ին նշվեց «Պի» թվի միջազգային օրը:



- Տիգրիկամաթեմատիկական ֆակուլտետի ուսանողները մասնակցեցին ապրիլի 24-ի համար կազմակերպված երթին:



- Ապրիլի 26-ին ֆակուլտետի ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվեց շարաթորյակ:



- Ապրիլի 17-ին Սուրբ Հովհաննես Իմաստասեր Կաթողիկ Օձնեցու ննջման օր:



- Մայիսի 9-ին կազմակերպվեց էքսկուրսիա դեպի Էջմիածին, Զվարթնոց, Ամբերդ, Օշական նվիրված մայիսյան հաղթանակներին:



- Հունիսի 14-ին հանձնվեցին բակալավրիատի ուսանողների ավարտական դիպլոմները:



- Հուլիսի 2-ին մագիստրոսների դիպլոմների հանձնման արարողություն:



- Մեդալների 21-ին տեղի ունեցավ արդեն ավանդույթ դարձած արշավ դեպի Սայմեխ: Արշավին մասնակցություն ունեցավ նաև ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը:



- Հոկտեմբերի 25-ին Վանաձորի պետական համալսարանի դահլիճում տեղի ունեցավ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի կողմից կազմակերպված հերթական միջոցառումը: 2016-2017 թթ. բակալավրիատի և մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողներին տոնական հանդիսությամբ հանձնվեցին ստուգման գրքույկներն ու ուսանողական տոմսերը: Այս տարի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում առաջին անգամ ընդունելություն կազմակերպվեց համալսարանական լրիվ նոր՝ «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտությամբ, որը մեծ հետաքրքրություն առաջացրեց դիմորդների շրջանում:



- Վանաձորի պետական համալսարանի նորակազմ ուսանողական խորհուրդի նախաձեռնությամբ նոյեմբերի 3-ին կազմակերպել էր խաղ-վիկտորինա, որին մասնակցեցին համալսարանի բոլոր ֆակուլտետների ներկայացուցիչներ: Ինտելեկտուալ խաղ-մրցույթում յուրաքանչյուր ֆակուլտետ հանդես եկավ իր թիմով՝ կազմված տարբեր մասնագիտությունների 5 ուսանողներից: Խաղի ավարտին հաղթող ճանաչվեց ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի թիմը: Նոյեմբերի 4-ին հաղթող թիմը պարգևատրվեց հավաստագրերով:



2. 2016թ. համար պլանավորված աշխատանքները, որոնք չեն կատարվել/կամ մասամբ չկատարված/:

Կրթական գործընթաց

- Ուսումնառության, դասավանդման և գնահատման նորարարական մեթոդների ներդրումը քիչ թվով դասախոսների կողմից, որի անհրաժեշտությունը նշում են ուսանողները:
- Դիմորդների հավաքագրման մեխանիզմների ոչ լրիվ օգտագործումը:
- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման գործընթացին մասնակցության բովանդակային կողմի ապահովումը:
- Մատենավարության ոչ բավարար վիճակը, որը ազդում է գնահատման օբյեկտիվության վրա:

Գիտահետազոտական գործընթաց

- Քիչ թվով ուսանողների ներգրավումը ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների մեջ:

Որակի ապահովում

- Արտաքին շահառուների հետ թույլ կապը:

Սոցիալ-դաստիարակչական գործնեություն

- Ակադեմիական խորհրդատուների թույլ կապը ուսանողների հետ, մատենավարության ոչ պատշաճ հսկողությունը:
- Ֆակուլտետի առկա և հեռակա բաժինների ուսանողների միջև համատեղ գործունեության բացակայությունը:

4. Զարգացման միտումները, 2017 թ. ստորաբաժանման կողմից իրականացվելիք աշխատանքների ցանկը

2017թ. ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի գլխավոր խնդիրներից են լինելու կրթության որակի բարձրացումը, համալսարանական ծրագրի ներդրումը, դասախոսական կազմի երիտասարդացումը, երիտասարդ կադրերի գիտական մակարդակի բարձրացումը, ուսանողների ինքնուրույն աշխատանքների որակի բարելավումը և անցած տարիների թերացումների և բացթողումների վերացումը:

Նպատակ	Խնդիր	Պատասխան ատու /կատարող/	Համագործակցություն	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը /ցուցիչ/	Մպառնալիքներ, ռիսկեր
Կրթական գործունեություն						
1. Մասնագիտության կրթական ծրագրերի կազմում և վերանայում:	1. Որակի ապահովման առաջավոր փորձի ուսումնասիրություն, վերլուծություն և ամփոփում: 2. Գործատուների ներգրավում մասնագիտության կրթական ծրագրի որակի ապահովման գործընթացում: 3. Ուսանողների և շրջանավարտների ներգրավում կրթական ծրագրի որակի բարձրացման գործընթացում: 4. Ուսումնամեթոդական փաթեթի մշակում: 5. Առարկայական նկարագրերի մշակում:	Դեկանատ, ամբիոնի վարիչներ, դասախոսներ	ՎՊՀ-ի ուսումնական վարչություն	01.09.16թ. - 01.06.17թ.	1. ՀՀ ՈԱԾ-ի պահանջներին և ՎՊՀ ի առաքելությանը, տեսլականին և ռազմավարությանը համապատասխան մշակված և ներդրված ՄԿԾ-ներ: 2. Ներքին և արտաքին շահակիցների կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին բավարարող բարձրորակ մասնագետների պատրաստում:	1. Ուսանողների թվի և նրանց մոտ ուսումնառության մոտիվացիայի նվազում: 2. Համալսարանի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ: 3. Երիտասարդ, խոստումնալից կադրերի պակաս:
Գիտահետազոտական						
1. Ամբիոնների համալրումը երիտասարդ կադրերով: 2. Երիտասարդ կադրերի ներհոսք գիտության ոլորտ 3. Ամբիոնների դասախոսների գիտահետազոտական գործունեության աջակցման, խրախուսման քաղաքականություն և արդյունավետության ապահովում:	1. Ամբիոնները երիտասարդ, խոստումնալից կադրերով համալրման գործընթացի իրականացում, նրանց մասնագիտական աճի և կայացման աշխատանքներ, փորձի փոխանակում ամբիոնի առաջատար, փորձառու դասախոսների կողմից: 2. Ամբիոնների դասախոսների գիտահետազոտական գործունեության խրախուսման քաղաքականության մշակում:	Ամբիոնի վարիչներ, դասախոսներ	ՎՊՀ-ի ուսումնական վարչություն, գիտական մաս	2016-2017 թթ	Ամբիոնները համալրել որակյալ, փորձառու մասնագետներով և երիտասարդ խոստումնալից կադրերով:	1. Անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակը մարզում: 2. Դասախոսական աշխատանքի նկատմամբ ցածր մոտիվացիա: 3. Երիտասարդ, խոստումնալից շրջանավարտների /որոնք կարող էին ապահովել ամբիոնի կադրային ներուժը/ արտահոսքը հանրապետությունից:

3.Որակի ապահովում						
1.Մատուցվող կրթական ծառայության կատարելագործում	1. Դասախոսական կազմի կոմպետենտության բարձրացում 2.Արտաքին շահառուների ընդգրկումը ավարտական պետական քննությունների հանձնաժողովներում	Ամբիոնների վարիչներ, դասախոսներ	ՎՊՀ-ի ուսումնական վարչություն Որակի ապահովման կենտրոն	2016-2017 թթ	Որակյալ մասնագետների պատրաստում	Դիմորդների ցածր մակարդակը
4.Սոցիալ-դաստիարակչական գործունեություն						
1. Ակադեմիական խորհրդատուների համակարգի կատարելագործում 2.Ուսանողների համակողմանի զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծում:	1.Ակադեմիական խորհրդատուների աշխատանքային ծրագրերի և պլանների մշակում: 2.Բարոյական, գեղագիտական, հայրենասիրական զգացմունքների ձևավորմանն ուղղված տարատեսակ միջոցառումների կազմակերպում և անցկացում:	Դեկանատ ակադեմիական խորհրդատուներ	ՎՊՀ-ի ուսումնական վարչություն	2016-2017 թթ		

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան՝

Հ.Գրիգորյան